

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/5**

**13 նոյեմբերի 2015 թ.**

Քննարկվեց «ԱՍԷԴԼ» ՍՊԸ 05.10.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 25.09.2015 թ-ի թիվ 5101814 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողովը), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 10.08.2015 թ-ի թիվ 5101814 հանձնարարագրի համաձայն «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 25.09.2015 թ-ի թիվ 5101814 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 7.200.000 դրամ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել «ԱՍԷԴԼ» ՍՊԸ վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են սույն բողոքին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են նախապատրաստվում «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի կողմից Ակտում նկարագրված խախտումը կատարված լինելու փաստի կապակցությամբ և անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
**Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ**